Ֆիզիկական անձ հաճախորդների համար քարտի համարով արտերկրի բանկերի MasterCard քարտերին կատարվող փոխանցումների (MoneySend) տեղեկատվական ամփոփագիր

Ամփոփագրում նշված պայմանները
կարող են փոփոխված լինել:
Մանրամասների համար.
Հեռ.՝ (374 10) 56 11 11
Էլ. հասցե՝ office@ameriabank.am
www.ameriabank.am

Սույն տեղեկատվական ամփոփագիրը ներկայացնում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում/ այսուհետ՝ Բանկ/ գործող քարտի համարով արտերկրի բանկերի MasterCard քարտերին կատարվող փոխանցում (MoneySend)՝ MoneySend, մասին տեղեկություններ;

MoneySend փոխանցումների իրականացման ընդհանուր կանոններ.

- Փոխանցում քարտին կարող են իրականացնել հաշվետեր հանդիսացող հաճախորդները My Ameria համակարգի միջոցով:
- Փոխանցումները կարող են իրականացվել ընթացիկ, խնայողական և քարտային, հաշիվներից հետևյալ արժույթներով՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո:

Գործարքի իրականացումից հետո Փոխանցողին տրամադրվում է մատուցված ծառայության վերաբերյալ անդորրագիր: Անդորրագրի կրկնօրինակի տրամադրումը կատարվում է համաձայն ստորև ներկայացված սակագների.

• Մինչև 6 ամիս վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	Անվճար
• 6 ամսից մինչև 1 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի և էլեկտրոնային ձևով պահվող յուրաքանչյուր
• 1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի և էլեկտրոնային ձևով պահվող յուրաքանչյուր փաստաթղթի համար

Ուժի մեջ է՝ 25.11.2026 թ-ից

• 1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի ուղարկում հաճախորդի էլեկտրոնային հասցեին առանց դրոշմակնիքի	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի և էլեկտրոնային ձևով պահվող յուրաքանչյուր փաստաթղթի համար
Տեղեկանքների տրամադրում	
• Բանկի կողմից սահմանված ձևանմուշով տեղեկանքի տրամադրում Բանկի տարածքում պատվիրելու դեպքում	3,000 ՀՀ դրամ՝ներառյալ ԱԱՀ
• Բանկի կողմից սահմանված ձևանմուշից տարբերվող տեղեկանքի տրամադրում Բանկի տարածքում պատվիրելու դեպքում	5,000 ՀՀ դրամ՝ներառյալ ԱԱՀ
• Բանկի կողմից սահմանված ձևանմուշով տեղեկանքի տրամադրում Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգով, Բանկի կայքով	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
• Բանկի կողմից սահմանված ձևանմուշից տարբերվող տեղեկանքի տրամադրում Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգով, Բանկի կայքով պատվիրելու դեպքում	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ

Քարտի համարով փոխանցում կատարելու համար անհրաժեշտ է մուտք գործել MyAmeria ինտերնետ բանկինգ համակարգ, ընտրել «Ծառայություններ» բաժնի «Փոխանցում» ենթաբաժինը, այնուհետև «Քարտին Փոխանցում» և կատարել հետևյալ քայլերը՝

- Լրացնել փոխանցումը ստացող քարտապանի քարտի համարը և անուն ազգանունը լատինատառ
- Լրացնել Ստացողի ռեզիդենտության երկիրը
- Ստացողի իրավաբանական կարգավիճակը
- Լրացնել գումարի չափը և ընտրել արժույթը՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո
- Ընտրել ելքագրվող հաշիվը՝ քարտային, ընթացիկ կամ խնայողական
- Ընտրել միջնորդավճարի գանձման հաշիվը՝ ընթացիկ կամ խնայողական
- Լրացնել նպատակը
- Սեղմել «Փոխանցել»:

Ելնելով տարաբնույթ հանգամանքներից Բանկի կողմից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:[1]

[1] Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին:

MoneySend համակարգով կարող եք փոխանցել հետևյալ երկրներ ՝	
Փոխանցում	Արգենտինա, Ավստրիա, Բելգիա, Բրազիլիա, Չեխիա, Եգիպտոս, Ֆրանսիա, Վրաստան, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իսլանդիա, Իռլանդիա, Իսրայել, Իտալիա, Ղազախստան, Ղրղզստան, Լատվիա, Լիբանան, Լիխտենշտեյն, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մակեդոնիա, Մալթա, Մեքսիկա, Մոլդովա, Չեռնոգորիա, Նիդեռլանդներ, Նոր Զելանդիա, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սերբիա, Սինգապուր, Սլովակիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա, «Միացյալ Արաբական Էմիրություններ», Միացյալ Թագավորություն, Ուրուգվայ, Ուզբեկստան, «Բոսնիա և Հերցեգովինա», Բուլղարիա, Կանադա, Խորվաթիա, Կիպրոս, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Գրենլանդիա, Հորդանան, Մարոկկո, Պարագվայ, Պերու, Էկվադոր

Գործարքների իրականացման սահմանաչափեր	
Մեկ գործարքի նվազագույն գումար	1,000 ՀՀ դրամ 2 ԱՄՆ դոլար 2 Եվրո
Մեկ գործարքի առավելագույն գումար	399,000 ՀՀ դրամ 1000 ԱՄՆ դոլար 1000 Եվրո

Փոխանցման արժույթ	Միջնորդավճար
ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար և Եվրո	Քարտային և ոչ քարտային հաշվներից – 2%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ

Հաճախորդի հարցումների/բողոքների դիտարկման կարգը

Ցանկացած դեպքում Հաճախորդի կողմից Բանկ ներկայացված գրավոր կամ բանավոր հարցման, բողոքի կամ գրավոր բողոք-պահանջի պատասխանը հաճախորդին պետք է տրամադրվի ոչ ուշ, քան հարցումը/բողոքը/ բողոք-պահանջը ստանալուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքի/Բողոք պահանջի պարագայում, ելնելով խնդրի էությունից կարող են լինել վերջնական պատասխանի տրամադրման ժամկետային շեղումներ, որոնց մասին Բանկը պարտավոր է գրավոր տեղեկացնել Հաճախորդին պատասխանի վերոնշյալ ժամկետի լրանալու օրվանից ոչ ուշ: Հաճախորդի կարծիքը ներկայացվում է Բանկի կողմից սահմանված «Հաճախորդի Բողոքի/բողոք-պահանջի, վճարային քարտով կատարված գործարքների բողոքարկման, կարծիքի, առաջարկության ներկայացման ձևին» համապատասխան կամ Հաճախորդի կողմից նախօրոք կազմած գրության ձևով:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է»[2]

Բանկը վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից
Հեռ.՝ (374 10) 56 11 11
Էլ. հասցե՝ office@ameriabank.am
www.ameriabank.am

[2] www.fininfo.am
Բանկը պատասխանատվություն չի կրում նշված ինտերնետային կայքի բովանդակության ստույգության և արժանահավատության, այնտեղ տեղադրված գովազդների համար, և ֆինանսական կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում այդ ինտերնետային կայզում տեղադրված տեղեկատվության օգտագործման հնարավոր հետևանքների համար: